

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ ՆՈՐ ԱՂԲԻԻՐԸ

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆԻ

Վերջին ամիսներս հալ բանասիրութիւնը սաստիկ հետաքրքրած է Խորենացու պատմութեամբ: Այս բազմաչարչար հեղինակը, ամենանշանաւորը մեր հին մատենագիրներին մէջ՝ ամենից շատ է ենթարկւել գիտութեան անաչառ քննադատութեան, գիտութեան, որ չէ ճանաչում հայրենասիրութիւն, չէ զգում բարեպաշտ երկիւղածութիւն՝ դէպի Նւիրական դարձած գրական հին լիշատակարանները. այլ մի ձեռքում բռնած համեմատական ուսումնասիրութեան մանրացոյցը, միւս ձեռքում անողոք քննադատութեան անդամահատութեան դանակը՝ հանդարտ պաղարկւնութեամբ և լարւած ուշադրութեամբ հետազոտում է հին մատենագիրներին, ոմանց գլորում է անդունդը, հրատարակում է կեղծ, խաբեբալ, խաղախող և խարդախւած. իսկ ոմանց իրանց ստոր աստիճանից տանում բարձրացնում է ալնպիսի գահ, որի վերալ երբէք չեն գտնւել դարերի ընթացքում:

Մ. Խորենացին շատ անգամ մտել է քննութեան ալս սարսափելի բովը, շատ անգամ ենթարկւել է անողոք չարձակումների և կասկածների. բայց երբէք չէ գտնւել ալն վտանգաւոր դրութեան մէջ, ինչպէս Ներկալումս: Խնդիրն ալժմ ալնպէս է դրւած, որ եթէ մի ուրիշ չաջող լուծում չը գտնէ՝ մեղ պէտք է ստիպէ ընդունել ալս երկուսից մէկը. կամ՝ որ Խորենացին հինգերորդ դարի մատենագիր չէ, այլ վեցերորդ դարի երկրորդ. կէսում, մինչև իսկ եօթներորդ դարի վերջերում ապրող մարդ: կամ, եթէ Մ. Խորենացի անունով մէկն վերաւի ապրել է հինգերորդ դարում՝ ուրեմն Խորենացու պատմութիւն կոչւած գիրքը նորա գրածը չէ, այլ մի կեծիք է Զ. կամ Է. դարերի. Երկսպրաբանութիւն, որի թէ ալս և թէ միւս կողմը հաւասարապէս կորստաբեր նշանակութիւն ունին Մ. Խորենացու և նորա պատմութեան համար: Եթէ առաջին կէտն ընդունենք՝ Խորենացին դուրս կը գալ մի խարդախող և լանդուքն ստախոս, որ իրան համարում է Սս. Սահակի և Մեսրոպի անմիջական աշակերտ, իրան ալանատես է համարում պատմած վերջին անցքերին, մինչդեռ Նա Ս. Սահակից ամենաաքիւղ մի դար լետով է ապրել ու գրել և ժամանակակից չէ ալն անց-

քերին, որ նկարագրում է. Նթէ երկրորդ կէտն ընդունենք՝ Խորենացին ալ ևս կանհետանալ մեր մատենագրութեան միջից իբրև պատմութեան հեղինակ, և նորա անունով մեր ձեռքը հասած պատմութիւնը կը դառնալ մի կեղծւած աշխատութիւն, որ Զ. կամ Է. դարի մի անանուն եկեղեցական շարագրել է և վերագրել Մ. Խորենացուն, իւր աշխատութեան լարդն աւելացնելու համար: Այնուհետև ալդ աշխատութիւնը կը կորցնէ իւր նշանակութեան ու կարևորութեան ամենամեծ մասը: Յիշեալ երկ-սալարանութեան հր կէտն էլ ընդունելու լինինք՝ մեր առաջ դուրս կը գան անթիւ խնդիրներ մեր պատմութեան և գրականութեան մասին, բոլորովին կը կործանուի ալն չէնքը, որ կոչւում է «Հալոց մատենագրութեան հինգերորդ դար», որի գլխաւոր սիւնն է Մ. Խորենացու պատմութիւնը. մենք կընկնինք մի քաօսի, մի անկանխելի խաւարի մէջ մեր նախկին պատմութեան և մատենագրութեան նկատմամբ:

Այս Դամոկլեան սուրը Մ. Խորենացու գլխին կախեց Ֆրանսիացի գիտնական հալագէտ Ա. Կարրիէր, նոյն անձը, որ անցեալ տարի մի առանձին գրքովով ջանաց ապացուցանել, թէ Խորենացին երբէք չէ ունեցել Մար Աբաս անունով մի աղբիւր, ալ նորա թէ անունը և թէ պատմութիւնը բոլոր հանգամանքներով հնարել է իւր գլխից: Ա. Կարրիէրի ալս դատավճիռը որքան և անողոք ու խիստ է (ասեմք նաև անխալ չէ)՝ ահուո ամենալին մի շատ թեթև վէրք է, համեմատութեամբ ալն մահացու հարածին, որ ալժմ տալիս է Խորենացուն վիշալ գիտնականը: Մենք ալստեղ համառօտ կերպով կը բացատրենք խնդրի էութիւնը և կը դնենք լետով մեր կարծիքն ալդ խնդրի նկատմամբ, որ եթէ ընդունելի լինի բանասէրներին՝ կարծում ենք կը լուծէ ալդ կնճռոտ խնդիրը և կոչնչացնէ Դամոկլեան սուրը:

Ա. Կարրիէր «Հանդէս ամսօրեակի» ալս տարաւ օգոստոսի համարում հրատարակեց մի կարեոր լօղած «Մ. Խորենացու մէկ նոր աղբիւրը» վերնագրով (եր. 250—253), որտեղ ցուց տւեց, որ Մ. Խորենացին իւր Բ. գրքի 83 գլխի բովանդակութիւնը փոխ է առել Վարք Սեղբեստրոսի կոչւած վկայաբանութիւնից¹⁾: Իսկ արբալ Դիւչէնի «ըրած հմտա-

¹⁾ Խորենացու ալդ փոխ առնած 83-րդ գլխի համառօտ բովանդակութիւնն ալս է. Դիոկղետիանոսի Մաքսիմինալ դուստրն ամուսնանում է Կոստանդիանոս կեսարի հետ, որ Հռոմի Կոստ թագաւորի որդին էր Հելենալ պոռնիկից ծնւած: Տրդատ հարսանիքի ժամանակ բարեկամանում է Կոստանդիանոսի հետ: Սրբ Կոստանդ մեռնում է՝ Դիոկղետիանոս նորա տեղ կալսր է նշանակում Կոստանդիանոսին: Սա ղեռ կեսար եղած ժամանակ, կուր մէջ լաղթելով՝ երազում մի խաչ է տեսնում, վերան գրած, թէ «Այսու լաղթեալ» Այս խաչն իբրև գինւորական նշան գործածելով՝ լաղթում է թշնամիներին. բալց լետով իւր կնից գրղւելով՝ հալածանք է

կան հետազոտութեանց համեմատ՝ վարք Սեղբեստրոսի գրութեան լատինական խմբագրութիւնը Ս. դարու վերջին տարիներէն չառաջ չի կրնար ըլլալ, ուստի և չո՞ն խմբագրութիւնն» (որից օգտուել է Խորենացին Ա. Կարրիէրի կարծիքով) «ամենէն կանուխ Զ. դարուն առաջի տարիներն եղած պիտի ըլլայ: Այն ատեն պէտք է թողուլ Խորենացու Հայոց պատմութեան յօրինման նկատմամբ աւանդեալ տարբերութիւնը, և նոյն գրոց յօրինումն մինչև Զ. դար իջեցնել: Զենք կրնար ըսել թէ՛ այս կտորը լեռնա-մուտ լաւելած մըն է, այնու որ Խորենացու գրութեան կերպն և ոճը կը մատնէ մեծապէս»: (Հանդ. ամս. եր. 253):

Այս եղբակացութիւնն անուամ է Ա. Կարրիէրի՝ հիմնուելով իւր մէջ բերած համեմատութեան վերալ. նա մի կողմից զետեղում է Վարք Սեղբեստրոսի վկայաբանութեան լոճարէն բնագրից հատածներ և նոցա դէմը դնում է համապատասխան հատածները Խորենացու 83-րդ գլխից: Նմանութիւնն ալեւորան ակներև է, որ անկարելի է չը համոզուել, թէ ալք 83 գլխի աղբիւրը Սեղբեստրոսի վարքն է:

Ա. Կարրիէրի այս գիտն հարկաւ անուշադիր չը մնաց բանասէրների կողմից: Նոյն «Հանդէս ամսօրեայի» նոյնմբերի համարում (եր. 343—346) Ս. Վ. Պարոնեան հալ բանասէրը հրատարակեց իւր առարկութիւնը Ա. Կարրիէրի դէմ: Բացատրելով մի կողմից, թէ ինչ անտեղի հետևանքների կարող ենք հասնել, ընդունելով Ա. Կարրիէրի հետ, թէ Խորենացու պատմութիւնը գրած է Զ. դարում, միւս կողմից խոստովանելով, որ լիրաւի Խորենացու 83 գլուխը հաւատարիմ նմանութիւն ունի Զ. դարի լոճարէն բնագրին հետ՝ Հ. Պարոնեանը այս միջին ենթադրութիւնն արաւ, իբրև ամենահաւանական, թէ Սեղբեստրոսի վարք կոչած գրածքն հաւանօրէն Զ. դարից շատ առաջ ծնունդ է առել լոճական վկայաբանութիւնների մէջ, և մի կողմից անցել է փերմիլիանոս եպիսկոպոսի գրածքների մէջ, որոնցից և օգտուել է Խորենացին Ս. դարում, իսկ միւս կողմից անցել է Հռոմ, փոփոխութիւններ կրել, և այս փոփոխ-

լարուցանում քրիստոնեաների դէմ, որի պատճառով երկխանդական բոլորութեամբ արտանում է: Բժիշկները չեն կարող օգնել, ոչ էլ կախարդները, որ Տրդատ Նորա մօր ուղարկեց Պարսկաստանից և Հնդկաստանից: Փոքրմերը խորհուրդ են տալիս՝ երեխաներ մօրթել և նոցա արիւնը մի աւազանի մէջ ածելով լողանալ: Բայց Կոստանդիանոս խղճահարում է անմեղ երեխաների լացից և նոցա մալերի ողբից, և լաւ է համարում հիւանդ մնալ, քան կոտորել երեխաներին: Այս մարդասիրութեան փոխարէն՝ Աստուծոյ հրամանով Առաքեալները տեսիլքում երևում են Կոստանդիանոսին և հրամայում են՝ Հռոմի Սեղբեստրոս եպիսկոպոսից մկրտել, որով կազատւի իւր արտից: Կոստանդիանոս մկրտում և լաւանում է և Սեղբեստրոսի ձեռքով քրիստոնեայ է դառնում, և նորա առաջ Աստած ջնջում է բռնաւորներին, սինչպէս համառօտ պատմում է Ագաթանգեղոս:

ւած կերպարանքով նորից թարգմանւել է լոնարէն—այն ձեռք, որ ալժմ գոլութիւն ունի:

Ա. Կարրիէր «Հանդէս ամսօրեալի» ղեկտեմբերի համարում (երես 373—379) պատասխանեց Հ. Պարոնեանին, Պր. Նորալլ Բիւզանդացի նամակով լալոնել է Ա. Կարրիէրին, թէ Սեղբեստրոսի վարքի հալերէն թարգմանութիւնը գտնւում է Սոկրատ Սքուլաստիկոսի պատմութեան սկզբում¹⁾, (որ ղեռ տպագրւած չէ): Պր. Կարրիէր Վենետիկ գնալով քննում է Սոկրատի Պատմութեան չորս ձեռագիրները, որոնք բոլորն էլ սկզբում ունին «Վարք Սեղբեստրոսի»: Այս թարգմանութիւնից Ա. Կարրիէր մէջ է բերում հաւածներ և համեմատում է Խորենացու 83 գլխից հաւածների հետ, որից անտարակուսելի կերպով երևում է, որ Խորենացու 83 գլխի աղբիւրն է ոչ թէ Սեղբեստրոսի վարքի լոնարէն բնագիրը (ինչպէս առաջ ենթադրում էր պ. Կարրիէր), այլ ալդ հալերէն թարգմանութիւնը, որ գտնւում է Սոկրատի պատմութեան սկզբում: Ա. Կարրիէր ալապէս է ձևակերպում իւր եզրակացութիւնը. «Մովսէս Խորենացի գործածած է վարուց Սեղբեստրոսի հալերէն թարգմանութիւնը» (Հանգ. ամս. 375): Հետազոտութիւնը շարունակելով պ. Ա. Կարրիէր նկատում է, որ Սեղբեստրոսի վարքի հալերէն թարգմանութեան մէջ ալնպիսի հաւածներ կան, որոնք ալդ գրւածքի լոնարէն, լատիներէն և ասորերէն բնագիրները չունին, բաց սակայն Խորենացու 83 գլխում գտնւում են: Պարզ է որ լոն բնագրից եղած թարգմանութեան մէջ ալս լաւելածն անելու համար՝ հարկաւոր էր որ գոնէ մի քանի տարի անցած լինէր: Սորանից Ա. Կարրիէր գալիս է ալս երկրորդ եզրակացութեան. «Մովսէս Խորենացի գործածած է վարուց Սեղբեստրոսի հալերէն թարգմանութիւնը՝ երբ վերջինս արդէն ընդմիջ արկեալ լաւելածներ առած էր» (Հանգ. ամս. եր. 378):

Ա. Կարրիէր լալոնում է, որ առ ալժմ չէ ուղում իւր հանած հետևանքն աւելի ևս հեռուն տանել, Բաց նորա հետազոտութիւնից ինքն ըստ ինքեան ըզխում է հետեւեալը.

Սեղբեստրոսի վարքի լոնարէն թարգմանութիւնն եղած է Զ. դարի սկզբներում:

Հալերէն թարգմանութիւնը պէտք է որ ալդ լոնարէնից գոնէ մի քանի տարի ուշ եղած լինի:

Գոնէ մի քանի տարի պէտք է անցած լինի, մինչև որ հալերէն թարգմանութիւնը եկամուտ լաւելածներ ընդունէ:

¹⁾ Նոն բանն, անկախ պպ. Ն. Բիւզանդացուց և Ա. Կարրիէրից՝ լալոնում է և Միաբանը Պարիզից գրած մի նամակով, որ տպւած է «Հանդէս Ամսօրեալի» նոն ղեկտեմբերի համարում (եր. 370—372):

Խորենացին օգտուել է ալս՝ լաւելածներ պարունակող հալերէն թարգմանութիւնից։

Ուրեմն՝ Խորենացու պատմութիւնը, ամենականութեւնը՝ գրած պէտք է լինի Զ. դարի կէսերին մօտ։

Կարող է լինել որ հալերէն թարգմանութեան մէջ լաւելածներ արել է նոյն ինքն թարգմանիչը. ալս դէպքում էլ Խորենացու պատմութիւնը չէ կարող 520—530 թականից առաջ գրած լինել, որ մեծ տարբերութիւն չունի նախորդ եղբակացութիւնից։

Սոկրատի պատմութեան երկու հալերէն թարգմանութիւն կալ (երկուսն էլ դեռ տպագրւած չեն). մէկը գտնուում է Նրուսաղէմի Հայոց վանքում, որի երբ և որի ձեռքով թարգմանւած լինելը չափոյն չէ. իսկ միւսից շատ ձեռագիր օրինակներ կան, և հէնց ալդ ձեռագիրների վիշտակարաններում գրած է, որ ալդ պատմութիւնը թարգմանւած է (Փիլոն Տիրակացու ձեռքով) Ներսէ՛ կամսարականի խնդրով (690—692), ուրեմն եօթներորդ դարի վերջերում։ Սթէ Նրուսաղէմի ձեռագիրն աւելի հին թարգմանութիւն չը լինի, և ապացուցւի որ Խորենացին օգտուել է ոչ թէ ալդ հին թարգմանութիւնից, ալ վերջինից՝ ալն ժամանակ ինքն ըստ ինքեան Խորենացու պատմութեան գրութեան ժամանակը կորոշւի ՚. դարի վերջերը, նոյն իսկ Ը. դարի սկիզբները։

Արդեօք կարելի է համեմել ալսպիտի եղբակացութեան, Խորենացու պատմութիւնը գրած ենթադրել Զ. դարի կէսերում, կամ նոյն իսկ Լ. դարի վերջը. արդեօք չկա՞ն մի ուրիշ ճանապարհ՝ լուծելու ալս՝ մեր մատենագրութեան և պատմութեան համար վերին աստիճանի կարևոր խնդիրը, լուծել ալն կերպով, որ Խորենացու գրութեան ժամանակի մասին ներկայումս ընդունւած կարծիքը չը լեղափոխուի և ուրիշ շատ լեղափոխութիւններ չ'առաջացնէ։ Մենք կարծում ենք կա՞ն ալդպիտի մի ճանապարհ, և կը փորձենք արծարծել և պաշտպանել, հակառակ պ. Ա. Կարրիէրի կարծիքին, ալս տեսակէտը, թէ Խորենացու պատմութեան Բ. գրքի 83 գլուխը Խորենացու գրածը չէ, ալ մոցրած է նորա պատմութեան մէջ ոչ առաջ քան ժ.Ա. դարում։ Մեր ալս կարծիքն հիմնուած ենք հետեւեալ փաստերի և դատողութիւնների վերալ։

Ա. Խորենացու պատմութիւնն ուսումնասիրողը չէ կարող չը զարմանալ ալս օտարտի երևութին վերալ, որ ալդ բարեպաշտ մատենագիրը ոչ մի տեղեկութիւն չէ տալիս հայոց քրիստոնէութիւն ընդունելու մասին, Նա մեծ սիրով ու ոգևորութեամբ պատմում է Տրդատի մանկութիւնը, Հալատանից փախչելը, Յունաստանում գործած քաջութիւնները, Հալատան վերադառնալն իրրե թագաւոր, պատերազմները, Հռոմ ուղևորելը Կոստանդինոսին տեսութեան, կատարած բարեպաշտական գործերն և ալն. միւս կողմից նոյնչափ ոգևորութեամբ և մանրամասնութեամբ պատ-

մում է Ս. Գրիգորի ծննդեան տեղը, մանկութիւնը, կրթութիւնը, ամուսնանալը, կնից բաժանելը, Տրդատի մօտ ծառայութեան մտնելն և առաքելական պաշտօնի պատրաստուելը, Հալաստանում իբրև քահանայապետ տրած բարեկարգութիւնները, նորա երկու որդոց մանկութիւնն ու կեանքը. պատմում է Ս. Նոնիէի (Հռիփսիմեան կոչւերից մէկի) Վրաստան գնալը և քարոզելը, Վրաց քրիստոնէութիւն ընդունելն և ալլն: Բայց ոչ մի բառով էլ պատմում Հռիփսիմեանց Հալաստան դալն ու նահատակութիւնը, Տրդատի հիւանդութիւնը, Ս. Գրիգորի վիրապից հանւելը, քարոզելը, Կեսարիա գնալն, եպիսկոպոս ձեռնադրուելը և հալոց միտնելը:

Նա չէր կարող այս դէպքերը չը գիտնալ, քանի որ Ագաթանգեղոսի պատմութիւնն աչքի առաջ ունէր: որին հետեւելով գրում է Տրդատի ժամանակի պատմութիւնը մեծ մասամբ, և որին չաճախ վկայ է կանչում իւր գրածներին: Նա չէր կարող մոռանալ կամ արհամարհել այս ճշանաւոր դէպքը, քանի որ սքանչանալով գտնում է Ս. Գրիգորին և Տրդատին, լուսաւորութեան հալը և առաքելալ կոչելով նրանց (Խոր. Բ. 92), քանի որ Վրաց աշխարհի քրիստոնէութիւն ընդունելը պատմում է, քանի որ առանձին երկու գրածք է ներդրում Հռիփսիմեան կոչւերին (Պատմութիւն Հռիփսիմեանց և Ճառ Հռիփսիմեանց): Մի հնար միայն կա՝ բացատրելու այս երեւոյթը, ալն է, թէ Խորենացու մեր ալժմեան ունեցած ընազրում պակասում է Հալոց դարձի պատմութիւնը իւր նախընթաց և հետևորդ պարագաներով:

Բ. Խորենացու պատմութեան մէջ այս պակաս մասը սկզբնապէս պէտք է ղետեղած լինէր նորա Բ. գրքի 82 և 84 գլուխների միջավայրում, ալսինքն պէտք է կազմէր նորա պատմութեան 83 գլուխը: Որովհետև նորա պատմութեան 82 գլխում մենք տեսնում ենք, որ Տրդատ վերադառնում է Հալաստան իբրև թագաւոր և մի պատերազմ է մղում պարսիկների դէմ. իսկ 84 գլխում արդէն տեսնում ենք, որ Տրդատ գնացել է Հռոմ Կոստանդիանոս կայսեր տեսութեան: 82 գլխում պատմում է Տրդատի կեանքը մինչև քրիստոնէութիւն ընդունելը, իսկ 84 գլխում՝ քրիստոնէութիւնն ընդունելուց չետոյ արածները: Պարզ է ուրեմն որ նորա քրիստոնէութիւն ընդունելը պէտք է պատմած լինէր 82 և 84 գլուխների մէջ, ալսինքն 83 գլխում, ալն գլխում, որ մեր ալժմ ունեցած ձեռագիրներում և տպագիր օրինակներում պակասում է:

Գ. Թէ Խորենացու նախկին ձեռագիրներում եղել է ալլ 83 գլուխը և բովանդակելիս է եղել հալոց դարձի պատմութիւնը՝ ապացուցւում է Ասողիկի պատմութեան համեմատութեամբ Խորենացու պատմութեան հետ: Ասողիկ ինչպէս իւր առաջին հանդէսում, ալնպէս և երկրորդ հանդէսի առաջին գլխի սկիզբը հիւսում է Խորենացու պատմութիւնից, մեծ մասամբ նոյն իսկ Խորենացու բառերով և երբեմն Խորենացու բովանդակու-

թիւնն համառօտելով: Նորնպէս վարում է նա և Տրդատի և Լուսաւորչի պատմութեան վերաբերութեամբ: Խնդիրը շատ կարեւոր լինելով մենք պատեղ կ'արտագրենք Ասողիկից մի բաական ընդարձակ հատւած, որի մէջ բաժան-բաժան գրում ենք այն տեղերը, որոնք բառացի նույն են Խորենացու հետ, նօտրագրում ենք այն տեղերը, որոնք բովանդակութիւնը նման է Խորենացու պատմածին, բայց բառացի չէ, իսկ սովորական գրութեամբ գրում ենք այն տեղերը, որ Խորենացու մէջ ամենեին չկան:

«Աբբ Էնքելով չառօյն առ Տրդատ, գտաք թագաւորեալ չերբորդ ամին Դիոկղեստիանոսի և չերկրորդ ամին Շապհոյ Պարսից արքայի: Որոչ հասեալ ի Կեսարիա՝ չոլովք ի նախարարացն Հալոց ընդառաջ էլեւէին: Եւ չառօյն առ Խորենացու Տրդատ, առբին Գրիգոր անթուխէ լորլորոնցն քոթու վաս Գրիգորի հաւորացն՝ վարդէկց լինէր ¹⁾: Իսկ քաջին Տրդատաւ արագապէս բազում ճակատս տուեալ նախ ի Հալս և ապա ի Պարսըս. զորոյ զփորձ առեալ կորովեացն Պարսից զսաստակութեան հակալին՝ բազում վիժօք զձին սատակեցին նետած դութեամբ, որ զարկուցեալ չերկիր ընկենոյր զարքայն: Իսկ նորա չարուցեալ և ի հետի չարձակեալ՝ փոխանակ իւր զբազումս ընկենոյր ի թշնամեացն. և զմիոյ ուրումն ձի կալեալ՝ աշտանակեաց արխարար, Դարձեալ չերկրորդումն միւս անգամ կամաւոր լեալ ի հետի՝ սուսերաւ զփղուցն զերակամս պուղէր Եւ ալսպիսի նահատակութեամբ չամեալ ի Պարսս և չԱսորեստան՝ անդր ևս քան զՏիգրոն չարձակի:

Եւ ի հնգետասաներորդ ամին Տրդատաւ սուրբ կուսանքն Հռիփսիմեանք և Գալիանեանք վասն աստուածապաշտութեան հալածեալք ի Դիոկղեստիանոսէ, եկեալ ի Վաղարշապատ քաղաք՝ զմարտիրոսական չարչարանս ընկալան ի Տրդատաւ արքայէ. չորում աստուածատուր պատուհանս ի վերայ Տրդատաւ և աշխարհիս Հալոց: Եւ ի նմին (ամի) աստուածահարալ չալտնութեամբ ելեալ ի վիրապէն սուրբն Գրիգոր՝ լուսաւոր վարդապետութեամբ սկիզբն առնէ և ըծչութեան հարուածոցն. որ հինգ օր անսուղ մնացեալ ամենայն բազմութեանն, ունկն դնելով վարդապետութեան սրբոյն Գրիգորի, որ են Առաջաւոր պահք, ամի ամի պահեալք մինչև ցալժմ. թող զալ ևս վաթսուն օր վարդապետութեան նորա:

¹⁾ Մեր նօտրագրած այս փոքրիկ հատւածն Ասողիկ գրել է՝ առաջնորդելով Խորենացու այս խօսքից. «Սա (Տաճատ) էր, որ չապաւն զգացոյց աներոյն իւրոյ Արտաւազդայ, և նա արքայի, նախ զԳրիգոր Անակալ լինել որդի: Թալոնի է որ Արտաւազդի այս չանտագործութեան անմիջական հետեանքն եղաւ Ս. Գրիգորի վիրապ ձգւելը:

Արդ ի գնալն Տրդատալ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս՝ նիւթէ չարիս Շապուհ ի վերալ մերոյ աշխարհիս. և ի խորհրդակէ նորո ելեալ Բագրատունի հետեայն յաշխարհիս. ի նորին բանս հրապուրեալ նահապետ ազգին Սլկունեաց՝ ազաթեմալ յարայե ամրանալ չամուրն Ողական: Եւ ալն ինչ ընդ հուպ կկեալ մեծին Տրդատալ չարեմոյց՝ առաջ Եւ Սլկունի զճենազնեանն Մամգուհն, որոյ ելեալ զապրտեմալ Բաղի խաբարս, և յորեմ որսալր նա երէս՝ հաբեալ նեղիս ողորմեալ: Ձու լուեալ որոյն՝ կարգէ զնախարարն Մամգուհ ի տեղի ապստամբին, անուանելով զՏորոն չանուհ իւր Մամգուհեան տունն¹⁾:

Այս ընդարձակ հատածի վերալ մի ակնարկ ձգելն անգամ բաւական է նկատելու համար՝ որ նա աղբիւրի նկատմամբ բաղկացած է երեք կտորից. առաջին և երրորդ կտորը կազմած են ստրկական հետեղութեամբ խորենացու պատմութեան, իսկ միջին կտորը խորենացու մեր ալժմեան ունեցած պատմութեան մէջ չկալ ամենեկն: Առաջին կտորը քաղած է խորենացու Բ. 82 գլխից, երրորդ կտորը քաղած է Նովն հեղինակի 84 գլխից: Իսկ յորեղից է քաղել Ասողիկ միջին կտորը: Դժար չէ մականբերել, որ ալս միջին կտորը Ասողիկ քաղել է խորենացու պատմութեան Բ. 83 գլխից, որ ալժմ կորած է, որ սակաւն պէտք է զոլութիւն ունենար հին ժամանակ: Այս մականբերութիւնն ստուգութեան կը փոխուի, երբ ի նկատ առնենք ալն հանգամանքը, որ խորենացու նախկին 83 գլխի մեր *a priori* ենթադրած բովանդակութեան բոլորովին համապատասխանում է Ասողիկի միջին կտորը, ալսինքն պարունակում է Հռիփսիմեանց պատմութիւնը, Տրդատի հիւանդութիւնը, Ս. Գրիգորի վերապից ելնելը, քրիստոնէութիւն քարոզելը և վարդապետութիւնը:

Նովն երեղիթը նկատուած է Յովհաննէս Կաթողիկոսի պատմութեան մէջ, եթէ համեմատելու լինինք նորա՝ ալս ժամանակին վերաբերեալ հատուածը խորենացու հետ: Տարբերութիւնը սորանումն է միայն, որ Յովհ. Կաթողիկոս չառ աւելի ազատօրէն է օգտուած խորենացուց և ի նկատի ունի նաև Ագաթանգեղոսի պատմութիւնը, մինչդեռ Ասողիկ միայն խորենացուց օգտուելով և ստրկաբար հետեւելով՝ աւելի կարեւորութիւն ունի մեր համեմատութեան համար:

Այս համեմատութիւնից զալիս ենք ալս եղբակացութեան, թէ Ասողիկ (ինչպէս և Յովհ. Կաթողիկոս) ունեցել են իրանց ձեռքում խորենացու ալնալիսի ձեռագիր, որի մէջ Բ. գրքի 82 և 84 գլուխներին մէջ զետեղած 83 գլուխը պարունակում էր Հալոց դարձի պատմութիւնը:

¹⁾ Ասողիկ, եր. 60 — 62. տպագր. Պետերբ. 1885.

Գուցէ՛ առարկող լինի, թէ Ասողիկ վերոյիշեալ միջին կտորը գրեւիս օգտուել է Ագաթանգեղոսից կամ Զենոբից: Բաց ալսպիսի առարկութիւնը հիմնաւոր չէ՝ Ասողիկի ալը միջին կտորի բովանդակութիւնը կազմում է Ագաթանգեղոսի պատմութեան գրեթէ երկու-երրորդական մասի նիւթը. և ալը 13 տողը մի ամբողջ գրքից ծաղկաքաղ անելու ընդունակ չէ Ասողիկ. ալսպիսի բան կարող է անել աւելի զարգացած մատենագիրը: Ասողիկի ամբողջ առաջին և երկրորդ հանդէսները արդարացնում են մեր ալս խօսքը: Բացի սորանից՝ Ագաթանգեղոս չէ վիշատակում, թէ հալերը հինգ օր անսւաղ մնացին և ալը հինգ օրը կոչեցաւ Առաջաւորաց պահք: ալլ նա պատմում է միայն՝ թէ թագաւորն ու մեծամեծները վաթսուն և վեց (կամ վաթսուն և հինգ) օր պահք պահեցին ¹⁾, որից լետոյ բժշկեցան հարւածներից: Արդ Ասողիկ չէր համարձակի, եթէ Ագաթանգեղոսից՝ օգտւած լինէր՝ նորա 66 կամ 65 պահոց օրերը ինքնազուրկ փոխել 5 օր անսւաղ ծոմապահութեան և դորանից զատ՝ 60 օր վարդապետութեան:

Իսկ Զենոբ թէպէտ լիրաւի լիշում է հինգ աւուր ծոմապահութիւնը՝ ²⁾ բաց բոլոր մնացած պատմութեամբ զանազանւում է Ասողիկից, և բաւական է մի թեթեւ համեմատութիւն՝ նկատելու համար, որ ոչ մի կապ և նմանութիւն չկալ Ասողիկի ալը միջին կտորի և Զենոբի մէջ: Բացի սորանից չալտնի է, որ Ասողիկ չէ էլ ճանաչում Զենոբին, որովհետեւ նրան չէ վիշատակում աչն աղբիւրների շարքում, որոնցից քաղում և հիւսում է իւր պատմութիւնը ³⁾: Ուրեմն հաստատ է մնում մեր վերեւի եզրակացութիւնը, թէ Ասողիկ վերոյիշեալ միջին կտորը համառօտել է Խորենացու Նախկին 83 գլխից, որ նորա ժամանակ գոյութիւն ունէր, իսկ այժմ կորած է:

Ասպիտով մենք կ'ունենանք Խորենացու Բ. գրքում երկու հատ 83-րդ գլուխ, որոնցից առաջինը պարունակում էր Հալոց դարձի պատմութիւնը, իսկ երկրորդը՝ Կոստանդիանոսի առասպելախառն պատմութիւնը: Առաջինը ինչպէս տեսանք, թէպէտ սլոժմ կորած՝ բաց բոլորովին վաւերական է, իբրեւ նույն ինքն Խորենացու գրածը, իսկ երկրորդը կասկածելի, իբրեւ Զ-Ը դարերում շարագրւած:—Տեսնենք ինչ չարնչութիւն ունի ալս երկրորդ, կասկածելի 83 գլուխը առաջին, վաւերականին հետ:

Դ) Կասկածելի 83 գլուխը չէր կարող վաւերական 83 գլխի մասը կազմել, որովհետեւ Հալոց դարձի պատմութիւնը և Կոստանդիանոսեան

¹⁾ Ագաթ. եր. 422, 423, 424, տպագր. Թիֆլ. 1882.

²⁾ Զենոբ, եր. 23, վեջ. 1889.

³⁾ Ասողիկ, եր. 6—7.—Առանձին ուսումնասիրութեան մէջ մենք կը ջանանք ցոյց տալ, թէ Զենոբի պատմութիւնը գրւած է ոչ առաջ քան Զ. դարում, ուրեմն Զենոբի «հինգ անսւաղ աւուր և Առաջաւորաց պահոց» աղբիւրը կարող է լինել նույն ինքն Խորենացին:

առասպելը բովանդակութեան կողմից անչափ տարբեր և հեռու են միմեանցից, որ Խորենացու նման ճաշակով և զրազէտ մատենագիրը չէր գետեղի մի գլխում ալ տարբեր նիւթերը: Դարձեալ՝ Հալոց դարձի պատմութիւնն անքան կարևոր էր, անպիսի ամփոփ ամբողջութիւն էր կազմում և ինքն ըստ ինքեան անքան ընդարձակ էր, որ անկարելի կը լիներ խճողել նրան կողմնակի նիւթով և նսեմացնել այդ գլխի նշանակութիւնը:

Ե) Կասկածելի 83 գլուխը չէր կարող վաւերական 83 գլխից զատ, առանձին գլուխ կազմել, որովհետեւ ալս դէպքում Խորենացու 82 և 84 գլուխները մէջ պէտք կը լինէր դնել ոչ թէ մի գլուխ, ալ երկու, և երկուսն էլ 83 թահամարով: Մինչդեռ բոլոր ձեռագիրները ալս տեղեւում գլխակարգութեան վերաբերութեամբ բոլորովին համաձայն են միմեանց:

Այս երկու (Դ, Ե) դատողութիւններից եզրակացնում ենք, որ կասկածելի 83 գլուխը տեղ չունէր Խորենացու նախկին պատմութեան մէջ, ալ նա բռնել է վաւերական 83 գլխի տեղը ան ժամանակ՝ երբ սա որ և է զիպւածով կորել էր Խորենացու պատմութիւնից:

Զ) Այս եզրակացութիւնը հաստատում է նորանով, որ Ասողիկ և Յովհ. կաթողիկոս, որոնք լատնապէս օգտւում են Խորենացուց և մանաւանդ առաջինը, որ բացառապէս Խորենացուց համառօտելով հիւստում է իւր պատմութիւնն ալս տեղեւում՝ ոչ մի վիշտակութիւն չեն անում ալս կասկածելի 83 գլխի բովանդակութեան մասին, ամենեկին չեն օգտւում ալս գլխից: Սա ապացոյց է, որ Ասողիկ և Յովհ. կաթողիկոսի ունեցած Խորենացու պատմութեան մէջ չը կար ալս կասկածելի 83 գլուխը, որից ոչ մի քաղած չեն անում, ալ կար վաւերական 83 գլուխը, որի բովանդակութիւնն ամփոփում են ալս երկու մատենագիրներն իրանց պատմութեան մէջ:

Է) Թէ ալս կասկածելի 83 գլուխը Խորենացու գրածը չէ՝ հաստատում է մասամբ և ան մեծ հակասութեամբ, որ նկատւում ալս գլխի և Խորենացու վաւերական գրածքների մէջ: Կասկածելի 83 գլխում աւանդում է, թէ Լոստանդիանոս կալսրը Հեղենալ պոռնիկի զաւակն է. մինչդեռ ինքը Խորենացին Լոստանդիանոսին համարում է սերած Հռիփսիմէ կոսի ցեղից¹⁾, իսկ Հռիփսիմէին համարում է թագաւորական տոհմից²⁾, կամ սլապէս ասելով՝ Լոստանդիանոսին համարում է Օդոտոս կալսի տոհմի սերունդ: Խորենացին չէր կարող լատնել, առանց որ և է բացատրութեան, ալսպիսի երկու հակասական կարծիքներ, ան էլ Լոստանդիանոսի նման հուշակա-

¹⁾ Ճառ Հռիփսիմեանց, Կր. 323, Մատեն. 1865:

²⁾ Պատմ. Հռիփսիմեանց, Երես 298.— Հռիփսիմէի թագաւորական զարմից լինելը Խորենացին աւանդում է համաձայն Ագաթանգեղոսի, Կր. 80,

ւոր կապեր մասին, որին կոչում է «մեծ», «սուբյեկտ», «բարեպաշտ» և այլն:

Ը) Իբրև կողմնակի ապացույց, թէ այս կասկածելի 83 գլուխը ուշ ժամանակի ներմուծութիւն է Խորենացու պատմութեան մէջ՝ կարելի է նկատել և հետեւեալ հետաքրքրական երևութիւնը, որ այս գլուխը ասելի մաքուր և անաղարտ է պահպանւած ձեռագիրներում, քան նորա նախընթաց և հետևորդ գլուխները ¹⁾:

Վերոյիշեալ բոլոր դատողութիւններից և փաստերից մենք եզրակացնում ենք հետեւեալը.

Խորենացու պատմութեան Բ. գրքի 83 գլուխը իրան Խորենացու գրածը չէ, ալ եկամուտ չաւելած է (interpolation) ոչ առաջ քան ժԱ դարում: Մինչև ժԱ դարի սկիզբը Խորենացու պատմութեան ձեռագիրները պարունակում էին բուն Խորենացու գրած 83 գլուխը, որի բովանդակութիւնն էր Հայոց դարձի պատմութիւնը իւր պարագաներով:

Մեր խնդրից դուրս է, թէ ինչպէս է եղել այդ չաւելածը, երբ և որի ձեռքով—որոնց մասին կարելի է հաւանական ենթադրութիւններ անել: Մեր նպատակն էր ցույց տալ, թէ Խորենացու պատմութեան ալփմեան օրինակներում գտնւող 83 գլուխը Խորենացու գրածը չէ, ուստի և չէ կարելի հիմնել նորա վերալ և Խորենացու պատմութիւնը համարել Ջ. կամ Է. դարի գործ:

Միայն այսքանս կարևոր ենք համարում ասել, որ բացատրելու համար, թէ ինչո՞ւ կորուած վաւերական 83 գլխի փոխանակ կոտտանդիանոսեան առասպելն է մտցւած, և ոչ մի ուրիշ պատմութիւն: Սա մեր կարծիքով բացատրւում է լաջորդ 84 գլխի սկզբի խօսքերով «... և գնալն Տրդատակ ի Հռոմ առ սուրբն կոտտանդիանոսոս Անծանօթ հեղինակը, որ հարկ է համարել իւր ձեռքում ունեցած Խորենացու պատմութեան մէջ լրացնել պակասորդ 83 գլուխը՝ բնականաբար պէտք է դնէր այդտեղ կոտտանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելու պատմութիւնն և Տրդատի նորա հետ արդէն ծանօթ լինելը՝ որպէսզի այս կերպով կապէր այդ գլուխն լաջորդին հետ և բացատրէր Տրդատի Հռոմ գնալու շարժառիթը— իսկ կոտտանդիանոսի այս պատմութիւնը արդէն հաշիւէն թարգմանւած պատրաստ կար Սոկրատ Սքոլաստիկոսի պատմութեան սկզբում. պէտք էր միայն համառօտել այն տեղից:

¹⁾ Ն. Մաւի հրատարակած բաղդատութեան մէջ ԶԱ, ԶԲ, ԶԴ և ԶԵ գլուխները, որ վենետ. տպագրութեամբ 198 տող են կազմում՝ պարունակում են 167 տարբեր ընթերցւածք, իսկ ԶԴ գլուխը, որ բաղկանում է 45 տողից՝ պարունակում է միայն 18 ընթերցւածք, այսինքն՝ կրկնապատիկ պակաս քան նորա նախորդ և լաջորդ գլուխները—նոյն երևութիւն կատարւում է և կարինեանի բաղդատութեան մէջ—Ուրիշ հաւասար պայմանների մէջ բնագրի համեմատական անաղարտութիւնը նշան է նորա համեմատական նորութեան:

Գուցէ մեր դատողութիւններն այնքան հիմնաւոր և փաստերն այնքան զօրաւոր չեն, որ բաւական համարին վերջնականապէս լուծելու պրոֆէսոր Ա. Կարրիէրի զարթեցրած բանասիրական կարևոր խնդիրը. բայց կարծում ենք, որ նոքա արժանի են հմուտ բանասէրների ուշադրութեան և քննութեան, որոնք եթէ այս տեսակետից խնդիրը քննելու լինեն՝ լոյս ունինք աւելի զօրաւոր փաստեր կը կարողանան գտնել, քան որ մինչ չաջողեցաւ այս աիկափոյ գրած լօղածումը:

Յամենայն դէպս անկեղծ շնորհակալութիւն ենք չափնում գիտնական Ա. Կարրիէրին, որ առաջինն արծարծեց այս կարևոր բանասիրական խնդիրը, որի այս կամ այն կերպ լուծելը խիստ հետաքրքրական պէտք է լինի մեր գրականութեան և չափապէս ծերունի քերթողաօր պատմութեան և անձնաւորութեան նկատմամբ:

13 դեկտեմբերի, 1892 թ.

Թիֆլիս:

Նոր ստացւած գրքեր

1) ԱՐՇԱՐՈՒՆԻ.—«Սիրոյ ճարակք»։ Տիրան և Արփենիկ։ Կաղզանի անցեալից առնւած մը պատկեր։ Ալեքսանդրապոլ, տպ. Դ. Սանուկեանցի, գինն է 40 կոպէկ:

2) ՆԱԶԱՐԵԱՆՅ, Թ., տարկաւագ.—«Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը (ժողովրդական ընթերցանութեան համար)», Թիֆլիս, տպարան Շարաձէի, 1892 թ., գինն է 8 կոպէկ:

3) ՆՈՅՆԸ.—«Օրացույց 1893 թւականին Քրիստոսի» (վեցերորդ տարի), Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 20 կոպէկ:

4) ՔԻՒՐ-ՔԶԵԱՆ, Վ. Մ.—«Համառօտ պատմութիւն ընդհանուր ազգաց (!) Մասն Ա. Արեւելեան հին պատմութիւնք» (վաւերացեալ չուսումնական Խորհրդոյ Ազգ. կենդ. վարչութեան), Կ. Պոլիս, տպարան Ն. Ճ. Արամեան, 1892 թ., գինը 4 դրուշ:

5) ՉՄՇԿԵԱՆ, Մ.—«Ժողովրդական պատկերազարդ օրացույց 1893 թ. համար», Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ:

6) Հրատար. ԱՍՔ-ԱԻԼԻ.—«Զրուցներ» (Փոխադրութիւն) Տեար Ա. 1) Անատոններն էլ մեղք են, 2) Կոլր երաժիշտը, 3) Նրազ, 4) Ճշմարտախօս աշակերտը, 5) Նղբալրատէրը Թիֆլիս, տպարան Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 5 կոպէկ:

7) ԲՐԻԼԵԱՆՉԻԿԵԱՆ.—«Հայկական մանոգրաֆներ և ծաղկագրեր ձեռագործի համար», Հրատարակութիւն Ք. Բաշինջաղեանի, Ս. Պետերբուրգ, 1892 թ., գինն է 50 կոպէկ: